


Vergelijk Optreden

Zuveligheid op Sovjet hervorming
Veeleerbaarheid

84
7-92

1905.



4-3
797

146. Հայոց աշխարհ
1352

ԱՐՄԱՆ ՈՒՅԼԱՆՈՒՐ ԵՒ ՄԱՐԱԼԻ ՊՐԵԴՈ:

ՅԱՆՑԱԿՈՐ

Պ Օ Բ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

(Թարգմանութիւն)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՇԻԿՈ» Ծճկ. 1905 թ.
Մագարեան փողոց № 15

(79)

20 APR 2006

19 NOV 2010

87
Պ-99
ՄԱ

ԱՐՄԱՆ ՍԻՑԼՎԵՏՄ ԵՒ ՄՈ.ՐՍԵՑ ՊՐԵՎ.Օ:

394



ՅԱՆՑԱՀՈՐ

Ր Օ Բ

ԽՈՍՏՈՎ Ա.Ն ՌԻԹ.ԻՒՆԸ

(Թարգմանութիւն)

581 - 17 Բ. Բ. 8

Թ Ի Ց Լ Ի Ս

Տպարտն «ՀԱՐՄԱԿԱ» Ընկ. 1905 թ.
Մաղաքեան փողոց № 15

(79)

14262-57

23997.2013.8

6989

ՄԱՐՍԻՑԼ ՊՐԵՎՈ

ՅԱՆՑԱՀՈՐ ՄՈՐ ԿՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Երբեմն, յետ նայելով իմ անցեալի վերայ,
ևս կենզրոնացած մտածում էի, թէ ինչն է կազմում
նրա էռոթիւնը, ինչն է այդ անցեալից իմ
համար այրող յիշատակութիւնների գանձարան
ստեղծել, մինչզեռ նա մի շարք անգոյն, մութօրեր կարող էր լինել, և մինչև անգամ սկսել էր
գառնալ: Այդպիսի ժամերում ես աշխատել եմ
զարթեցնել իմ խիղճը և իմ անձնական անաչառ
գատաւորը դառնալ,

«Վերջ ի վերջոյ», ասում էի ինքս ինձ, «ես
երբէք իրաւունք չունիմ ինձ կատարելապէս բաղդաւոր համարելու, գողանալով այդ բադդաւորութիւնը հասարակութիւնից, օրէնքից, իմ յատուկ պարտաւորութիւնից: Ես ազնիւ կին չեմ եղել...
Ամրող տասնուշորս տարի ես խարել եմ ամուսնու»:

Եւ ես անկեղծօրէն աշխատում էի գրգռել
իմ դէմ իմ մէջ եղած դժգոհութիւնը. ինձ թւում
էր, որ ես աւելի քիչ մեղաւոր կը լինէի, եթէ
խղճի խայթոց զգայի: Եւ երբ ես նայում էի ամուսնուս, որը լուս նստում էր բազկաթոսի վերայ և իրան յատուկ եղանակով լրազիր էր կարդում, ես յանդիմանութիւններ էի թափում գըլ-խիս... «Այդ ազնիւ մարդը քեզ է նուիրուել, տաւով քո ձեռքը իւր բարի անունը և հանգստութիւնը: Իսկ դու ի՞նչպէս ես վարուել նրա հետ տասնուշորս տարուայ ընթացքում: Եւ ի՞նչ կը

Дозволено Цензурою 11 Декабря 1904 г. Тифлис.

լինէր, եթէ նա իմանար այդ բանը,—այդ խեղճ,
համեստ աստիճանաւորը, որը իւր ծանը աշխա-
տութիւնով ապրուստ է հասցնում իրան, քեզ և
իւր աղջկան: Ի՞նչ ես կարծում,—նրա տանջանք-
ները չէին գերազանցիլ քեզ այրող յափշտակու-
թիւններից, որոնցով միշտ զբաղվում ես»:

Այս... Բայց նա չգիտէ: Նա երբէք չիմանայ: Նա երբէք չի տեսել այն մարդուն, որի համար ես նրան դաւաճանել եմ: Ես կարծում եմ, որ ան-
շուշտ նրա միամտութիւնից առաջացող ապահո-
վութիւնն է ազատել ինձ խղճիս խայթից: Երբ
որ ես նրան, իմ ամուսնուս, ամբողջ սրտով և
մարմնով չեմ սիրում, միմիայն պահպանում եմ
նրա բարեկամութիւնը, որին երկարատև միաս-
նական կեանքը և շահերի ընդհանրութիւնն է
ստեղծել, ես էլ պարտաւորուած չպէտք է միջա-
մտեմ նրա գործերին: Որքան էլ խիստ պատէր
մեզ օրէնքների և վայելչականութեան ցանցը,
բանը դրանով չի փոխվում, կինը իրան պարտա-
ւոր է համարում նրան միայն հաւատարիմ մնալ,
որին նա սիրում է:

Ահա թէ ինչ էի ասում ինքս ինձ մինչև ե-
րէկ: Իսկ այսօր խայթի թոյնը ես մի այնպիսի
կոկիծով եմ զգում, որ չեմ հասկանում, թէ վի-
րաւոր սրտով ինչպէս պէտք է շարունակեմ
կեանքս... Եւ այս ամենը հետևանք էր մի խօսքի,
որ գուրս թուաւ իմ տասնու վեց տարեկան աղջ-
կանս, Ելենայիս, բերանից:

Այդ երեխայի կրթաթեան համար արել եմ
ես, ինչ որ կարողացել եմ: Յանցաւոր կին լինե-
լով հանդերձ, ես չեմ կարող յանդիմանել ինձ,
գոնէ, թէ ես վատ մայր եմ եղել: Կարծում եմ,
որ այսպիսի հոգացողութիւնից շատ քիչ աղջիկ-

ներ են օգտվում երեխայութիւնից: Մինչև ան-
գամ այն ժամերում, երբ ես կիւսենին տեսնելու
համար խելքս թոցնում էի, և դառնում էի մի
անմիտ և անզուսպ առարկայ, իմ աղջկայ առող-
ջութեան և բարեկաղութեան մասին հոգացողու-
թիւնը ինձ խելքի էր բերում և հնարաւոր դարձ-
նում ինքս ինձ տիրելու: Գուցէ, այս հոգացո-
ղութիւնը, որին ես պարտաւոր եմ, հեռու պա-
հեց ինձ յայտնի անվայել վարժունքից, որին
հասնելու աշխատում էր կիւսենը... Ելենայի մեծա-
նալուն համեմատ ես էլ ուշի ուշով հետեւում էի և
նրան և ինձ: Երեխայի պարզ և արթուն աչքերը
խարելու համար, ես այնպիսի խորամանկութիւն-
ների և ջանքերի էի դիմում, որոնց չէի դիմում
ամուսնուց ճշմարտութիւնը թագցնելու համար:
Ես, մեղաւորս, մեռած խղճով, այդ անփորձ հո-
գու սուրբ մաքրութիւնը ուրախութեամբ կատա-
րեալ անմեղութեան մէջ էի պահպանում: Երբ որ
նա սկսեց տասն տարեկան զառնալ, ես նրա հո-
գացողութիւնը այլևս չէի վստահանում ինձ հա-
ւատալ: Ես տուեցի նրան վանք, ապահով տեղ,
ուր աղջկանս կրթութիւնը կարող էր շարունա-
կուել և վերջանալ ազատ ամեն մի վտանգից:
Վանքից նա ամիսը մի անգամ էր դուրս գա-
լիս, արձակուրդների ժամանակ նա մեր մօտ եր-
կու շարաթ անցկացրեց, և յետոյ իւր տատի մօտ
ամարանոց գնաց: Երբ որ նա մեր տանն էր լի-
նում, ինքնըստինքեան հասկանալի էր, որ կիւսե-
նի հետ մեր ամեն մի յարաբերութիւնը կտրւում
էր... Եւ ես հրձվում էի, տեսնելով, որ աղջիկս
հիանալի մաքրութեան մէջ է աճում, կատարե-
լապէս առանց տեսնելու կեանքի վատ կողմերը:
Եւ ահա, իմ կարծիքով, այդքան երկար ժամա-

նակի ընթացքում, այդ էր խանգարում ինձ
խղճի խայթ զգալ: Այսուամենայնիւ, ևս կարու-
դացայ նախատեսել, որ վանքը նրան միշտ
չէր պահպանի, և, երբոր վճռեցի շատ մա-
տադ հասակում նրան ամուսնութեան տաւ ևս զգա-
ցի, որովհախոն կեանք վարելու ընդունակ կլինիմ
այն օրից, երբ Ելենան կը փոխադրուի մեզ մօտ:
Երեկ առաւոտեան նա պէտք է վերագառ-
նար վանքը... Իսկ ես ցերեկը ժամի երեքին Լիւ-
ուսի հետ տեսալցութիւն նշանակեցի... Այս,—
այժմ ես հասկանում եմ,—որ մայրական սիրոյ
և սանձարձակութեան խառնուրդը իմ կեանքում
զարհուրելի է... Մինչև ոյժմ դա ինձ չէր տան-
ջում: Ես ջերմեռանգորէն պահպանում էի Ելենա-
յին, և նրա պատճառաւ ուրախութեամբ կը զո-
նէի Լիւսէնի հետ տեսալցութիւնները: Բայց ի-
մանալով, որ ես կարիք չունիմ աղջկանս մասին
վախենալու, ես փախչում էի սիրահարիս մօտ.
Իմ կողմից անխղճութիւն էր արածս, և այժմ էլ
ես ամաչում եմ... Եւ այսպէս, արդէն վճռուած էր,
որ Լիւսէնը ժամը երեքին իրան տանը սպասէր
ինձ: Յանկարծ առաւոտեան շատ վաղ վանքից
հեռագիր եմ ստանում: Վանամայրը յայտնում
մեզ, որովհետ ննջարանների պատերը, որոնք
նորից են ներկուած, գեռ բոլորովին չեն չորա-
ցել ուստի սաները գեռ ես չեն կարող ննջարան-
ներում քնել, և արձակուրդը կարող է երկու օ-
րով էլ երկարիլ: Ելենան շատ ուրախացաւ, իսկ
ես սաստիկ շփոթուեցի... Պէտք չէր արդեօք, հե-
ռովով Լիւսէնին յայտնել: Իսկոյն զլառում ծագեց
այն միտքը, որ աղջիկս ամբողջ առաւոտ ինձաւ
նից չպէտք է հեռանար: Հնարաւորութիւն չունէի
ես ոչ հեռագիր գրելու և ոչ տանելու, այնպէս, որ

վճռեցի այդպէս էլ թողնել «Լիւսէնը կը սպասի»:
Նա անշուշտ կը հասկանայ, որ ինձ խանգարել են».

Եւ նա, արդարեւ, մի ժամ, ժամուկէս, եր-
կու ժամ սպասում էր: Բայց որովհետեւ նա զի-
տէր իմ ճշտապահութիւնը, նա սկսել էր անհան-
գիստ լինել, երբոր ժամի հինգն էր խփել: Դու-
ցէ ութ անջատուած օրերը նրանում աւելի էին
սաստակացրել ինձ տեսնելու ցանկութիւնը, նա
անկեղծօրէն սիրում է ինձ: Լիւսէնի համբերու-
թիւնը կտրուել էր,—նա դուրս է գալիս, և ա-
ռաջի պատահած կառով ճանապարհ է ընկնում
գէպի մեզ:

Ժամի վեցի սկզբին աղախինս, որը չէր ճա-
նաչում Լիւսէնին, (գաղտնիքը, կրկնում եմ, ոչ
ոքի յայտնի չէր), յայտնեց ինձ, որ մի պարոն
է եկել և ինձ հարցնում է, սա մի գինեվաճառ է,
որը իւր ծառայութիւնն է ուզում առաջարկել:
Նրա ինձ հետ տեսնուելու ցանկութիւնը այնքան
մեծ էր և նա այնքան թափանձանօք էր պնդել,
որ աղախինս չէր իմացել, թէ ինչպէս մերժի
նրան: Ես ներս մտայ ամուսնուս առանձնասե-
նեակը, որ գեռ նախարարութիւնից չէր վերա-
գարձել. Ելենան սպասում էր ինձ հարևան սե-
նեակում:

Երբոր ես Լիւսէնին տեսայ, ինձ թւաց, որ
ամեն ինչ կորած է, որ ճշմարտութիւնը յայտ-
նուել է և մեղաւորութիւնս բացուել... Ես յան-
կարծ ճշացի: Լիւսէնը աշխատում էր հանգստա-
ցնել ինձ: «Ես այս բոպէին կը գնամ... Բայց ին-
չո՞ւ դուք չեկաք... Չեմ յիշում, թէ նրան ես ինչ
պատասխանեցի, ես ուզում էի, որ նա շուտ գնար,
սակայն նա էլ ուշանալու կարիք չունէր, բաւա-
կանէր, որ համոզուեց, որ ես առողջ եմ... նախ

քան Ելենայի մօտ գնալս, ևս իմ սենեակը վաղեցի
և այնտեղ աշխատում էի հանգստանալ:

Ելենան ոչ մի խօսք չէիցեց զինեվաճառի մա-
սին, իսկ ես էլ չէի վստահանում խօսել և սուտ
ասել այն խորը թափանցող աչքերի ներկայու-
թեամբ: Օրն առանց մի դիպուածի անցաւ: Ա-
մուսինս վերադարցաւ: մենք նստեցինք ձաշելու:
Նա շատ ուրախ էր և բաւական էր այն պատ-
ճառաւ, որ իւր պաշտելի աղջիկը մի երեկոյ էլ կը
մնար իւր մետ: Քաղցրաւենիքի ժամանակ, տանձը
մաքրելով, հարցրեց ամուսինս:

Այսօր ցերեկը, իմ բացակայութեամբ, այս-
տեղ ոչ ոք չէ եղել:

Ես գումար էի, որ գումատվում եմ և շփոթ-
վում: խօսել էի ուղում, բայց բերանս ծովում էր,
և ես չկարողացայ մի բառ անգամ արտասանել:
Եւ յանկայծ, քարացած, լսում եմ Ելենայի ձայնը,
որը շատ հանգիստ կերպով պատասխանում էր:

Ո՛չ հայրիկ,—ոչ ոք չէ եղել,

Ես նայեցի Ելենայի վրայ... ես հանդիպեցի
նրա հայացքին: Այդ աչքերը ծիծաղում էին և
պարզ հասկացնում էին:

Մի վախիր,—ես քեզ հետ եմ:

Ամբողջ գիշեր ես չկարողացայ քնել: Ես ա-
մաչում էի: Աւաղ, ես խիստ պատժուած եմ: Զէ՞ո՞ր
այդ աղջկան ոչ թէ միայն յայտնի է (անշուշտ
վաղուց արդէն) իւր մօր ամօթանքը, այլ և իմ օ-
րինակը նրան խարել սովորացրեց, ինձ համար
խարել... և ինձանից լաւ:



ՍԱՐՍԻՑԼ ՊՐԵՎՈ

ՀՆԿԵՐԱԿԻՑ

Գիտե՞ք, սիրելի Անրի, որ ձեր հաւատար-
մութեամբ գուք ինձ մեծ պատիւ էք ցոյց տալիս:
Դեռ երեսուն տարիս չլրացած, ես, (ասածս թող
ձեզ չբարկացնի, ընդամէն մի տասնութամսով
եմ մեծ իմ գեղեցիկ ընկերակից հվօննայից, որը
կարողացել է ձեզ գուը գալ), զեռ երեսուն տա-
րիս չլրացած, ես, իրեւ մի պառաւ կին, ձեզանից
յանձնարարութիւն եմստանում ամուսնութիւններ
գլուխ բերելու համար: Եթէ խօսքը ձեր մասին
չլինէր, պարոն, և ոչ հվօննայի մասին, որին ես
շատ եմ սիրում, դէպի որը ես երեք ատելութիւն
չեմ կարող զգալ, այն ժամանակ, գուցէ. ես հը-
րաժարուեի ալպիսի պատուից: Իսկ ես—ձեր
մտերիմ բարեկամն եմ և սիրով յայտնում եմ ծա-
ռայութիւնս,—ձեր համար կանեմ, ինչ որ կա-
րող եմ:

Գուք ասում էք, որ գուք ձեր զգացմունքը
մեր զմայլեցուցիչ հվօննային յայտնելու համար
վստահութիւն չունէք, այդ ես, ի հարկէ, այս տե-
սակ եմ բացատրում, որ գուք վախկոտ էք ու
ձեզ անարժան էք համարում նրա բարեհաճու-
թեամը: Բայց ձեզ մի բանքասէք ձեր վախկոտու-
թեան համար: Ես բոլորովին ոչ մի տղամարդ չեմ
ճանաչում, որը այդ դէպքում այդքան դանդաղ
լինէր, ինչպէս գուք, երբ հարկաւոր է կնոջն ա-
սել—«սիրում եմ»: Ձեզ նման օֆիցերին, որ այգ-
քան քաջ է պատերազմում, վրդովում է մեր ա-
ռաքինի կերպարանքը: Երեսի մի փոքր անմատ-
չելի գծագրութիւնը ստիպում է ձեզ յետ դառ-
նալ: Ո՛հ, սպայ, քանի յարմար դէպքեր էք գուք

արդէն բաց թողել. Զեր գեղեցիկ կազմուածքով
(բայց գուք գեղեցիկ կազմուածք ունէք, զիտէք
գուք այդ) գուք ձեր կապը աշխարհիկ կանանց
հետ պէտք է տասնեակներով հաշուէիք, իսկ ես
հաւատացած եմ, որ ձեր հաճոյանալու ձեերը...
զործնական ձևերը... վերաբերում են այն կա-
նանց, որոնք ամենից քիչ աշխարհիկ են: Բայց
մենք չենք կարող սպանողներ լինել: Միթէ ձեր
զինուորական օրէնքները պատերազմական դոր-
ծողութիւնների ժամանակ միշտ յարձակողական
շարժումներ չեն հրամանագրում...

Բայց թողնենք այս:

Իվոննան կամ,—ինչպէս գուք հանդիսաւոր
կերպով անուանում էք նրան իւր հանգուցեալ ա-
մուսնու ազգանունով, որով նա փոքր ինչ պար-
ծենում է,—ու-ու դե Գերբուան, ուրիշների նման
նոյնպէս չկարողացաւ ազատել ձեզ ձեր յատուկ
շփոթմունքից: Սակայն իմ սիրելի ընկերունուն
երբէք չէ կարելի ոչ ճարպիկ անուանել: Նա շատ
հմուտ կերպով կարողացաւ օգտուիլ իմ ժառայու-
թիւնից և յաճախեցրեց ձեր հետի տեսակցութիւն-
ները, երբ և տիրեց ձեր սրտին: Իսկ ես ոչինչ
չէի կասկածում: Ես ինքս ինձ ասում էի. «Եթէ նա
այժմ առաջուանից յաճախ է այցելում ինձ, նրա-
նով է բացատրվում, որ նա այրիացել է, ըստ ո-
րում և շատ ազատ ժամեր ունի»: Եւ այն ժամա-
նակ ես ուրախանում էի, տեսնելով, որ գուք ա-
ւելի սիրով էք այցելում իմ տունը... և այսպէս
գուք երկուսով ստիպեցիք ինձ բաւականին տա-
րօրինակ դեր խաղալ: Իսկ ես չեմ բարկանում ձեր
վրայ, որովհետեւ գուք լաւ ձգտումներով էք ա-
ռաջնորդիլում: Եւ ձեզ էլ իմ սիրելի Անրի, ես նե-
րում եմ աւելի սիրով, որ գուք ինձ ապացուցա-

նում էք ձեր հաւատարմութիւնը, դիմելով իմ
խորհրդին և օգնութեան:

Այս, բարեկամս, ձեր ընտրութիւնը յաջողակ
է, և ես երկու ձեռքով եմ ծափահարում ձեզ: Դուք
գիտէք, թէ ես ինչպէս եմ սիրում իվոննային:
Մեր բարեկամութիւնը, որն սկսուել է գիշերօթիկ
եղած ժամանակից, որը ժամանակուայ ընթաց-
քում զարգացել և հաստատուել է, մի հազուագիւտ
օրինակ է ներկայացնում. ես նրա օրինրդական
ըոլոր ցնորքների, բոլոր յափշտակումների և թու-
լութիւնների ստուգուն եմ. Նրա կեանքի քննողա-
կան վայրկեաններում ես նրա ամենահաւատարիմ
պաշտպանն եմ եղել, իսկ այդ կեանքում (նա, ի
հարկէ, ձեզ ասել է) երբեմն խովութիւններ են
եղել: Իվոննան, որը մի սիրտ կամ աւելի լաւ է
ասել մի աւելի ջերմ բնաւորութիւն ունի, քան
կարելի էր ենթալլել, յարմար ամուսին չըգտաւ.
Նրան իւր գեղեցիկութեամբ և շուայլ ձգտումներով
հանդերձ, ամենից առաջ հարկաւոր էր հարսաւ-
թիւն: Գերբուան ծերացել էր, սակայն մեծ հա-
րսաւութիւն ունէր. ճոխութեան հետ միասին նա
նրան գեղեցիկ, շատ յարգելի անուն էր տուել, և
այս ամենը միանգամից փոխեց մեր սիրելի իվոն-
նայի գրութիւնը, որը ամուսնութիւնից առաջ հա-
մարեա թշուառ էր և որին ու-ու Կոպէն էին ա-
նուանում: Նրա առաջ երբէք մի աբտասանէք Կո-
պէնների անունը. Նա այդ անունը, ինչպէս մի
չափազանց ստոր զասակարգի վերաբերեալ, ա-
տում է, և նա նրան յիշեցնում է այն համեստ
գրութիւնը, որի մէջ և այժմէն Կոպէնները Պի-
կարդիլում. սրանք ամենն էլ մի պատուաւոր մար-
դիկ են, սակայն մեծ մասամբ փոքր վաճառական-
ներ են կամ մանր աստիճանաւորներ: Եւ դարձեալ

չ՞ որ դուք կօպէնի հետ չէք ամուսնանում. այդպէս չէ, Դուք բաւականանում էք նրանով որ իվօնան, որը ծագումով մինչև անգամ սոսոր է միջին դասակարգից, կատարելութեան և գեղեցկութեան մարմնացումն է ներկայացնում:

Դառնալով Գերբուա բարոնի կիսը, իվօնանան մի առ ժամանակ հարբած էր հարատութիւնով և արխատօկրատիզմով. սակայն փողն ու կապերը չէին կարող լրացնել այն կոսջ կեանքը, որի քսան տարին դեռ չէ լրացել, գեղեցիկ կոսջ, որը երկրպագուներ ունի: Իվօնան իւր կրօնական ծանրաբարոյ համոզմունքների համար մինչև անգամ չունէլ պատսպարան կամ պաշտպան: Դուք, որ եղուիտների աշակերտ էք եղել և օֆիցեր նոր եղանակի, որը երբէք բաց չէ թողնում կիրակնօրեայ սուրբ պատարագը և տօնում է Զատիկը, ձերը միայն գեղեցիկ ձեփ վարմունքն է... Մի խօսքով իվօնայի ամուսնական հինգ տարիների կեանքը առանց մրրկի չանցան: Այս բանը նա էլ ձեզանից չէ թաքցրել, իվօնան, առնասարակ, ճշմարտախօս է և միենոյն ժամանակ, դուք այնքան խոհեմ էք, որ նրան իւր անցեալի համար չէք յանդիմանի, որի վրայ նա այլևս իշխանութիւն չունի և որի ժամանակ նա ձեղ չէք ճանաչում: Դուք, այդ սիրելի երեխայի վերաբերմամբ մեզանից աւելի խիստ իրաւունք չունէք: Դուք նրան կատարելապէս կարող էք վերանորոգել, և այդ ձեղ մեծ պատիւ կը բերի, և, սոյնպէս, հաւատացած եմ, մեծ ուրախութիւն կը պարգեի, իսկ ձեր անունը և անրիծ անցեալը նորէն իվօնայի առաջ բաց կանեն այն դռները, որմնք փարիսեցութիւնով փակուեցին:

Եւ այսպէս, իմ բարեկամ, դուք տեսնում էք,

որ ես բոլորովին հաւանում եմ ձեր դիտաւորութիւնները և կուրախանամ նրանց իրազործուելուն: Բայց... չէ որ դուք տղամարդ էք, և ձեզ հետ պարզապէս կարելի է խօսել, ուղիղ չեմ ասում, ես չեմ հաւատառում, որ իվօնան ընդունի ձեր առաջարկութիւնը: Ոչ թէ այն պատճառաւ, որ նա երբ և իցէ ձեր մասին վատ է խօսեել: Այդ մինչև անգամ ինձ համար հաճելի կը լինէր: Իսկ նա ձեր մասին այնպիսի միամտութեամբ է խօսում, այնպիսի սառնութեամբ, որ ես, որքան նրան ճանաչում եմ, գալիս եմ այն եզրակացութեան, որ այդ ամենը նրան չէ գրաւում: Իսկ եթէ ընդունենք, որ նրա սիրաը այժմ ուրիշին է պատկանում, այդ դէպքում պատճառը ամենից առաջ երիտառարդ Մօրիս Լոտրէնէ դառնում: Երեք ամիս սրանից առաջ թուլութիւնը նրանում սկսեց սկիզբն առնել դէպի այդ ցիկլիստը—հին յունական բանաստեղծը—և նա իւր այդ թուլութիւնը չէր ծածկում, և որովհետև նա այդ մասին այլ ևս ինձ ոչինչ չասաց, ուրեմն ես մտածեցի. «Հըմ, գուցէ համեստութիւնն է արգելում, որ նա ինձ հետեւեալի մասին հաղորդի»... Այսպէս էլ, կարելի է, որ յիշեալ Լոտրէն ուղղակի հրաժեշտ է տուել պաշտօնից և այժմ մոռացուել է, և իվօնան էլ միմեայն ձեր մասին է մտածում: Ես իմ բոլոր սրտովս ցանկանում եմ այդ: Ես ձեզ զգուշացնում եմ միայն անյաջող դէպքում, որը կարող է հնարաւոր լինել: Եթէ դուք առաջի անգամ մերժումն կըստանաք, մի վախեցէք պնդել: Իվօնայի երեակայութիւնը երկարատև չէ, և նա չափազանց խելօք է, որպէս զի հասկանայ, թէ մրապիսի առաւելութիւնն է տալիս նրան ամուսնութիւնը այդպիսի հարուստ, բարեվայել և լաւ դիրք

ուղնեցող երիտասարդ մարդու հետ, ինչպէս դուք էք: Անհրաժեշտ դէտքում ես էլ կաշխատեմ ազգել նրա վրայ, իսկ սրա փոխարէն ինձ պէտք է խոստանաք, որ ամուսնութիւնից յետոյ դուք պարոն Լոդրէին չէք ընդունի ձեզ մօտ:

Բայց որովհետև մենք այժմ կարող ենք նայել ձեր ամուսնութեան վրայ իբրև մի վճռուս գործի, ուրեմն ձեր «հին բարեկամը» կամինում է ձեզ միքանի խորհուրդներ տալ, որոնք,—մի կառկածէք այս բանում,—լի են իվօննայի և ձեր բաղդաւորութիւնը պահպանելու ցանկութեամբ:

Ամենից առաջ, բարսկամս, խոստացէք ինձ, որ դուք գտուանքով հոգ կը տանէք այդ թանկագին երեխայի առողջութեան մասին: Չը նայելով, որ նա արտաքուստ ամրակազմ և ծաղկափթիթ է երեւում, իսկապէս թոյլ է և այնպէս ջղային է, որ առողջացնելու համար բժիշկները թոյլ երևացին: Այդ հիւանդութիւնը նրա ամուսնութեան առաջի տարուանից է սկսվում, երբ որ նա սաստիկ հիւանդանում է մի քանի ամիս.—ասում են, որ որպէս թէ Բարոն Գերբուան ամենից լաւ գիտէր այդ ցաւի պատճառները: Խեղճիկ: Դուք պէտք է նրան սաստիկ սիրէք, որպէս զի անհետացնէք նրա մէջ այդ բոլոր վատ յիշողութիւնները: Նրա բնաւորութեան անհարթութիւնները ստիպում են ինձ, որ ես աւելի գգուանքով և աւելի սիրով վերաբերուեմ նրան, որովհետև նրանք յիշեցնում են ինձ նրա բոլոր կրած ֆիզիկական և բարոյական տանջանքերը: Տեսէք, չընակառակէք նրան, և, երբ նա երբ և իցէ կտրտմեցնի ձեզ իւր կամասիրութիւնով, որը այն անսպասելի անկարգութիւններից մէկն է, որոնք ինձ և ամենին էլ, որոնք նրան շատ մօտ են եղել, լաւ ծա-

նօթ է և այդ ժամանակ նրան չը հայհոյէք, իսկ աւելի լաւ է պինդ գրկէք, —կարծում եմ, որ այդ նրան հանգստացնելու միակ միջոցն է: Մի մարդ, որին իվօննան սաստիկ սիրում էր, ասաց ինձ մի անգամ. «Ամենալաւ զիծը իվօննայի հոգու մէջ—բնաւորութիւնն է կազմում»:

Ես մի երկիւղ ունեմ, սիրելի բարեկամս, և—այս իմ պարտաւորութիւնս է, որ ամենը ձեզ ասեմ, մինչդեռ գուք ճակատագրական քայլ էք անում,—և այս երկիւղը իվօննայի բաղդաւորութեան համար չէ. բայց այդպիսի ամուսին, ինչպէս դուք էք, նա չէր յոյս գնի, որ կըգտնի: Սակայն թէ դուք էլ ապագայում բաղդաւոր կարող էք լինել, գրանում ես հաւատացած չեմ և այդ միտքը ինձ անհանգիստ է անում: Դուք ինչո՞ւ էիք ինձանից խորհուրդ հարցնում: Ինչո՞ւ էք դուք ստիպում ինձ, որ ես այդ հարցը խղճի ենթարկեմ և ձեզ ձեզանից զգուշացնեմ: Ես ձեզ լաւ եմ ձանաչում, և ինձ թւում է, որ ձեր բաղդաւորութիւնը կարող էք այն կինը կազմել, որն աւելի հաստատածութիւն ունի, աւելի, եթէ կարելի է այնպէս ասել, աւելի «մայրական» է, քոն մեր յափշտակիչ իվօննան: Դուք ձեր առաջին փայլուն ասպարէկ ունէք. դուք քաջ սպայ էք համարփում և միենոյն ժամանակ ձեզ գնահատում են իրեն գիտնական մասնագէտի: Ինձ համար, իսկապէս, բոլորովին պարզ չէ, թէ ամուսնութիւնը, կնոջ և երեխաների մասին հոգատարութիւնը ի՞նչ ևս կարող է աւելացնել այդ տեսակ կատարեալ գոյութեան մէջ... Իսկ ես կըցանկանայի, որ դուք ամսւսնանայիք այնպիսի կնոջ հետ, որն աւելի խոհեմ, աւելի քիչ պահմնջող լինէք, որը իւր գգացմունքների փոխարէն միայն ձեր բարեկամութիւ-

նը կըխնդրէր, որով կուրախանար և կը պարծեար...

Սակայն այս ամեն ապացոյցներն, ի հարկէ, փշրվում են, մի մեծ փաստի առաջ. «Ես սիրում եմ»: Եւ եթէ դուք, արդարե, սիրում էք, եթէ դուք սիրոյ փոխարէն հեշտասիրութեան մի թեթև յուղումն չէք ընդունում, յուղումն, որը ձեզ նման վախկոտ տղամարդիկ միշտ փորձում են հրապուրիչ կանանց ներկայութեամբ, այդ ժամանակ ես վստահ կասեմ ձեզ. ամուսնացէք,—իսկ եթէ ոչ... եթէ ոչ... Տէր Աստուած... լաւ մտածէք և մի շտապէք: Զեմ կարծում, որ դուք տիկին գե-Գերբուաին կորցնելու վստահութիւն ունենայիք. Դը-ժուար թէ մի ուրիշն էլ գտնուի, որը նրան չափազանց սիրի և իւր իրաւունքները յայտնի նրա աջ ձեռքն ունենալու համար:

Այս գիշերուայ ընթացքում, մինչև էգուց առաւօտ, լաւ մատծեցէք, իմ սիրելիս, իսկ ցերեկուայ ժամը երեքին եկէք ինձ մօտ հաղորդելու ձեր մտածմունքի հետևանքը: Իսկ դրսերս ամենի համար փակ կըլինին, բացի ձեղանից. մեր ծանրաբարյ խօսակցութիւնը մինչև անդամ ամուսինը էլ չէ կարող խանգարել: Որովհետև նա Սօւան որսի է գնացել: Դուք իմ հետ առանց լոելու կըխօսէք, թողնելով ամօթխածութիւնը. ուղիղ չեմ ասում: Մենք միասին կըքննենք ձեր սիրտը, ես հաւատացած եմ, որ դուք նրան լաւ չէք ուսումնասիրել:—Նրա մէջն մտնելու համար ձեզ առաջ-նորդ է պէտք:

Ինչ կերպ էլ այդ քննութիւնը վերջանայ, ես ուրախ եմ, որ ձեզ և իմ սիրելի իգօննային, որին նոյնպէս եմ սիրում, ինչպէս ձեզ, ծառայութիւն անելու հնարաւորութիւն ունեմ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0310288

6989